Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
AM09/ENP-PCA/TP04

Առաքելության Զեկույց

Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման Մեթոդաբանության մշակում և նախապատրաստում
Գործունեություն Դ 1

Առաքելությունը իրականացրել են
Քրիստիան Հյուլսեգերը, Դանիայի Վիճակագրություն
Ռոլֆ Սելանդերը, Շվեդիայի Վիճակագրություն

Հայաստան, Մարտի 07-11, 2011

Տարբերակ. Վերջնական

National Statistical Service
Republic of Armenia

Statistics Denmark

Հեղինակի անունը, հասցեն, էլ. Փոստը

Քրիստիան Հյուլսեգեր
Sejrøgade 11
DK 2100, Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. + 45 3917 3031
khj@dst.dk

Ռոլֆ Սելանդեր
SE-701 89 Örebro
Շվեդիա
Հեռ. + 46 19 17 66 27
rolf.selander@scb.se

Բովանդակությունը

Ամփոփ նկարագիր ……..
1. Ընդհանուր մեկնաբանություններ ……... **Fejl! Bogmærke er ikke defineret.**
2. Գնահատում և արդյունքներ …… 5
3. Եզրակացություններ և առաջարկություններ …… 7
4. Առաջադրանքներ մինչև հաջորդ գործունեություն …… 8

Հավելվածներ՝
Հավելված 1. Տեխնիկական Առաջադրանք ……12
Հավելված 2. Առաքելության ծրագիր 14
Հավելված 3. Անձինք որոնց հետ հանդիպումներ են եղել 15

Այլ հավելվածներ որոնք հավաքվել են զեկույցի համար՝
Հավելված Դ1.4 ա-է (a-g) Համայնքային անձնագիր և հարցաթերթիկներ
Հավելված Դ1.5ա Հարցաթերթիկ Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտություն
Հավելված Դ1.5 բ Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտության Օրագիր
Հավելված Դ1.6 Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման օրենքը
Հավելված Դ1.7 ա Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման հարցաթերթիկի նախագիծ
Հավելված Դ1.7 բ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման նախապատրաստական աշխատանքներ
Հավելված Դ1.7 գ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման բյուջեն
Հավելված Դ1.8 Մամուլի հաղորդագրություն <<Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման դերը Հայաստանում>>
Հավելված Դ1.9 Կանոնակարգ 2008/1166 Գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտություն
Հավելված Դ1.10 ԵՄ Ազգային մեթոդաբանական զեկույց գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ
Հավելված Դ1.11 ա Հարցեր գյուղատնտեսական գործունեությունների վերաբերյալ փորձնական Մարդահամարի համար
Հավելված Դ1.11 բ Հրահանգներ գյուղատնտեսական գործունեությունների հարցերի վերաբերյալ փորձնական Մարդահամարի համար
Հավելված Դ1.12 Գործողությունների պլան

Հապավումների ցանկ

ԳՀՀ	Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
ՀԴ	Հայկական դրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԱՀ	Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտություն
ՏՄԱՎ	Տարածքային Միավորների Անվանացանկ վիճակագրությունում
ՀՀԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայություն
ԲՄ	Բնակչության մարդահամար
ԱՄՆԳԴ	ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտ

Ամփոփ նկարագիր

-

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայության (ՀՀԱՎԾ) շրջանակներում: Սա առաջին առաքելությունն էր, որը նվիրված էր Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման մեթոդաբանության մշակմանը և նախապատրաստմանը՝ Թվինինգ ծրագրի Բաղադրիչ Դ 1 –ի շրջանակներում:

Առաքելության նպատակներն էին՝

- Գնահատել Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման պլանավորման ներկայիս իրավիճակը;
- Անցկացնել սեմինար արտաքին շահառուների և դոնորների հետ՝ բացահայտելու համար հնարավոր արտաքին սահմանափակումները և խոչընդոտները, ինչպես նաև հաշվի առնել մինչ այժմ ձեռք բերված առաջընթացը
- Պարզաբանել թե որոնք են հանդիսանում գյուղատնտեսության վիճակագրության (գյուղատնտեսության համատարած հաշվառման) Եվրոպական Միության չափանիշները, և թե ինչ կարող են դրանք ենթադրել ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման համար:

ԱՊ Փորձագետները ցանկանում են արտահայտել իրենց շնորհակալությունը բոլոր այն պաշտոնյաներից և անհատներից, որոնց հետ նրանք հանդիպումներ են ունեցել, իրենց բարյացակամ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որը ցուցաբերվեց փորձագետներին Հայաստանում գտնվելու ժամանակ, և որոնք մեծապես նպաստեցին փորձագետների աշխատանքին:

Սույն զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և պարտադիր չէ, որ դրանք համապատասխանեն Դանիայի Վիճակագրության կամ Շվեդիայի վիճակագրության տեսակետների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

2.1 Գյուղատնտեսության կառուցվածքը, վիճակագրության հավաքագրումը և դրանց առնչվող հարցեր

2.1.1 Գյուղատնտեսության կառուցվածք

Գյուղատնտեսական արտադրանքի մոտ 95 տոկոսը արտադրվում է 340.000 գյուղացիական տնտեսությունների կողմից (տնտեսություններ) գյուղական վայրերում: Այս տնտեսությունների միջին չափը 1.2 հեկտար է: Գոյություն ունեն նաև մոտ 100.000 միավորներ քաղաքային վայրերում, որոնք կարող են ունենալ գյուղատնտեսական արտադրություն իրենց այգիներում: Մոտ 100 ընկերություններ զբաղվում են գյուղատնտեսական առևտրով: Կոպիտ հաշվարկներով, միավորների 50% արտադրում են ներքին սպառման համար, 30 % միայն շուկայի և 20 % ինչպես ներքին սպառման, այնպես էլ շուկայի համար:

2.1.2 Ադմինիստրատիվ հարցեր և երկրի տարածաշրջանային բաժանում

Հաշվապահական հաշվառումը պարտադիր չէ: Հարկային համակարգի զարգացումը այդ թվում գյուղատնտեսական գործունեությունների վերաբերյալ առաջին անգամ ներկայացվել է 2009 թվականի Հունվարի 1 ին: Սակայն այն չունի ոչ մի իրական ազդեցություն գյուղատնտեսական միավորների գրանցման վրա, քանի որ գրանցման համար շեմ է հանդիսանում 58 միլլիոն ՀՀ դրամի շրջանառությունը: Ընդհանուր խնդիր է հանդիսանում լավ ադմինիստրատիվ ռեգիստրների բացակայությունը: Առկա ռեգիստրները պատշաճ կերպով չեն արդիականացվում և գոյություն չունեն ընդհանուր նույնականացման համարներ:

Հայաստանը ընդունել է NUTS դասակարգումները: NUTS 1 դա երկրի մակարդակն է, NUTS 2 բաղկացած է 10 մարզերից, NUTS 3 բաղկացած է 866 համայքներից: Վիճակագրական աշխատանքը նույնպես բաժանվում է այս երեք մակարդակներով, բացի այդ, 36 ենթա շրջաններ (տարածքային միավորներ) կապված են մարզերի հետ:

2.1.3 Գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական և ադմինիստրատիվ տեղեկատվության հավաքագրում

Համայնքները հավաքում են տարեկան հետազոտությունների սպառիչ տվյալներ՝ Հունվարի 1 ի դրությամբ՝ անասնագլխաքանակի վերաբերյալ և Հունիսի 1 ի դրությամբ տարբեր մշակաբույսերի ցանքատարածությունների վերաբերյալ: Ընտրանքային հետազոտություններ իրականացվում են ամսեկան 7480 միավորների ընտրանքներով, որոնք ընտրվում են 187 համայքներից: Տվյալները ամփոփվում են համայնքային մակարդակով և ուղարկվում են ենթա շրջաններ և այնուհետև մարզեր, որտեղից էլ վերջնական ուղարկվում են ՀՀ ԱՎԾ: Տվյալների որակը ստուգվում է յուրաքանչյուր տարածքային մակարդակում:

Ադմինիստրատիվ նպատակներով, համայքները նաև ամեն տարի հավաքում են հիմնական տվյալներ բոլոր տնային տնտեսությունների վերաբերյալ, որոնք հավաքագրվում են հատուկ գրքում (համայնքային անձնագիր): Տեղեկատվության մի մասը, որն առնչվում է գյուղատնտեսության հետ նշանակում է, որ այդ անձնագրերը կարող են հանդիսանալ պոտենցիալ տվյալների աղբյուր՝ ամբողջ գյուղացիական տնտեսությունների ցանկը ստեղծելու համար:

Ճանաչողական այց իրականացվեց Արագածոտն մարզի տարածքային գրասենյակ: Գրասենյակի ղեկավարը տեղեկացրեց ԱՊ փորձագետներին ընդհանուր աշխատանքի վերաբերյալ ինչպես ամսեկան, այնպես էլ տարեկան հետազոտությունների հետ կապված և համայնքային անձնագրերի վերաբերյալ: Մարզային մակարդակով պահվում են տվյալները՝ ինչպես միկրո տվյալները, այնպես էլ ամփոմփ տվյալները: Ինչ վերաբերվում է համայնքային անձնագրերին, դրանք գնահատված են ՀՀ ԱՎԾ-ի կողմից՝ տրամադրելու բարձր որակ տնային տնտեսությունների գույքի վերաբերյալ և ամփոփ տվյալների վերաբերյալ, սակայն ավելի թույլ որակ՝ որոշ փոփոխականների (գյուղատնտեսության) վերաբերյալ, որոնք գրանցված են տնային տնտեսությունների մակարդակով:

Համայնքային անձնագիրը, հրահանգները և հետազոտության հարցաթերթիկները կցված են հավելված Դ1.4 a-g (ա-է):

Փորձագետները տեղեկացվեցին նաև Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտության (ԿԱՀ) վերաբերյալ: Սա ամսեկան հետազոտություն է, որի ընդհանուր ընտրանքը կազմում է 7872 տնտեսություններ (յուրաքանչյուր ամիս 600-700 ընտրանքային չափ): Տնտեսությունները պետք է ներկայացնեն գյուղատնտեսության վերաբերյալ մի շարք տեղեկատվություն, որը նման է նրան ինչը, որ սովորաբար հավաքագրվում է գյուղատնտեսության համատարած հաշվառման ժամանակ: Նրանք նաև պետք է լրացնեն այսպես կոչված Օրագիր իրենց ծախսերի, սպառման և եկամուտի վերաբերյալ: Հարցաթերթիկները կցված են հավելված Դ1.5 ա և Դ1.5 բ –ում:

Գյուղատնտեսության Նախարարությունը արտադրում է գյուղատնտեսական վիճակագրություն սահմանափակ քանակությամբ մշակաբույսերի վերաբերյալ, այսինքն՝ պահեստավորումների քանակը գյուղատնտեսական ձեռնարկություններում:

2.2 Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման պլանավորման իրավիճակը

2.2.1 Գյուղատնտեսության համատարած հաշվառման օրենքը

Գյուղատնտեսության Համատարած հաշվառման օրենքը հաստատվել է Խորհրդարանի կողմից 2008 թվականի Նոյեմբերի 27 ին: Տես Հավելված Դ1.6: ԱՊ փորձագետները տեղեկացվեցին, որ ՀՀ ԱՎԾ-ի կողմից բավականին բարդ աշխատանք է իրականացվել, որպեսզի համաձայնության գալ Գյուղատնտեսության Նախարարության հետ այն հարցի շուրջ, որ գյուղատնտեսության համատարած հաշվառումը ՀՀ ԱՎԾ-ի առաջադրանքն է, և որ ոչ մի միկրո տվյալներ չեն կարող տրամադրվել Գյուղատնտեսության Նախարարությանը: Փորձագետները գտնում են որ օրենքը շատ հստակ է բոլոր առումներով՝ այսինքն գյուղատնտեսության համատարած հաշվառման նպատակների, տարբեր հանձնաժողովների, որոնք պետք է ստեղծվեն և գաղտնիության ապահովման առումով:

2.2.2 ԱՄՆ Գյուղատնտեսության Դեպարտամենտի ԿԱԶՆ (CADI) աջակցությունը գյուղատնտեսության համատարած հաշվառման համար

Միացյալ Նահանգների Գյուղդեպարտամենտի փորձագետները աջակցություն են ցուցաբերել Գյուղատնտեսության համատարած հաշվառման պլանավորման համար: Այդ աշխատանքից ՀՀ ԱՎԾ ԱՊ փորձագետներին տրամադրեց ԳՀՀ հարցաշարի նախագիծ (Հավելված Դ1.7ա), անհրաժեշտ գործողությունների ցանկը ԳՀՀ նախապատրաստման համար (հավելված Դ1.7բ) և բյուջեյի ձևանմուշը (հավելված Դ1.7գ): Այս փաստաթղթերը հնարավոր չունեցան մանրակրկիտ ուսումնասիրվելու ընթացիկ առաքելության ժամանակ, սակայն շատ օգտակար կլինեն ծրագրի այս բաղադրիչի շրջանակներում առաջիկա գործողությունների համար:

2.2.3 Սեմինարներ Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման վերաբերյալ

Մարտի 2 ին կազմակերպվել էր համատեղ սեմինար ՀՀ ԱՎԾ –ի և Գյուղատնտեսության Նախարարության կողմից: Նպատակը հանդիսանում էր հանրությանը իրազեկել Հայաստանի Հանրապետությունում առաջիկա գյուղատնտեսության համատարած հաշվառման իրականացման վերաբերյալ և ներկայացնել Ռուսաստանի, ԱՄՆ-ի և այլ երկրների փորձը այս առումով: Տես մամլո հաղորդագրությունը հավելված Դ1.8:

Սեմինար էր կազմակերպվել նաև ներկայիս առաքելության շրջանակներում 2011 թվականի Մարտի 10 ին: Մասնակիցները ինչպես ՀՀ ԱՎԾ ից էին այնպես էլ այլ կազմակերպություններից (տես մասնակիցների ցանկը՝ հավելված 3): ԱՊ փորձագետները ներկայացրեցին երկու պրեզենտացիաներ, առաջինը գյուղատնտեսության համատարած հաշվառման նախագծման, նախապատրաստական աշխատանքների և ռեսուրսների պահանջների վերաբերյալ, իսկ երկրորդը վերաբերվում էր գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտությունների ընդհանուր նկարագրին ԵՄ երկրներում (որը համապատասխանում է գյուղատնտեսության համատարած հաշվառմանը): Քննարկվեցին հասկացությունները և սահմանումները կապված ԵՄ կանոնակարգի հետ, հատկապես գյուղացիական տնտեսության (ֆերմա) սահմանումը, տնտեսության գտնվելու վայրը և բնակչության այն շեմը, որը ենթակա է հետազոտության անցկացման համար: Ներկայացված պրեզենտացիաները կուղարկվեն բոլոր մասնակիցներին, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտության ԵՄ կանոնակարգը (տես հավելված Դ1.9) և ԵՄ մեթոդաբանության զեկույցը գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի հետազոտության վերաբերյալ (տես հավելված Դ1.10):

2.2.4 Բնակչության մարդահամար 2011

Բնակչության մարդահամարը (ԲՄ) նախատեսված է 2011 թվականի Հոկտեմբեր ամսին և ակնկալվում է, որ այն կունենա մեծ դեր գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստման համար: ԲՄ –ի նախագծի համաձայն, այն ներառելու է մի հատված գյուղատնտեսության վերաբերյալ, հիմնական հարցերով՝ գյուղատնտեսական գործունեությունների առկայության վերաբերյալ, տարբեր տեսակների անասունների անասնագլխաքանակի վերաբերյալ, տարբեր նպատակներով գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման և ակվակուլտուրաների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը օգտակար կլինի ԳՀՀ համար երկու առումներով՝ որոշելու այն բնակչությանը, որը պետք է ընդգրկվի ԳՀՀ հետազոտության մեջ և հաշվի առնել հնարավոր ֆիզիկական շեմերը, որոնք պետք է կիրառվեն ԳՀՀ համար: Տվյալների հավաքագրումը ԲՄ –ի համար նախատեսվում է 2011 թվականի Հոկտեմբերի 12-21, օգտագործելով շուրջ 11000 հաշվարարներ: Միկրո տվյալները կուղարկվեն ՀՀ ԱՎԾ մոտավորապես 2011 թվականի Դեկտեմբերի 1 ին՝ կոդավորման և ստուգման նպատակներով: Վերջնական արդյունքները ակնկալվում են 2012 թվականի երկրորդ կեսին: ԲՄ-ի իրականացման ռիսկն այն է, որ մինչ այժմ դեռևս ապահովված է ֆինանսավորման ընդամենը 52%-ը:

ԱՊ փորձագետները տեղեկացվեցին, որ փորձնական ԲՄ է իրականացվել 2010 թվականի աշնանը և զեկույցը սպասվում է սույն թվականի Ապրիլի սկզբին: Փորձնական ԲՄ-ի գյուղատնտեսության վերաբերյալ հարցերը և հաշվարարների համար պատրաստված համապատասխան հրահանգները կարող եք գտնել հավելվածներ Դ1.11 ա և Դ1.11 բ: ԱՊ փորձագետները գտում են, որ գյուղատնտեսության վերաբերյալ հարցերի ձգտումները ողջամիտ են: Եթե փորձնական ԲՄ –ի գնահատումը ի հայտ բերի որևէ խնդիրներ ռեսպոնդենտների համար մարամասնությունների հետ կապված, ապա այն կարելի է վերանայել՝ կրճատելու համար գյուղատնտեսության վերաբերյալ հարցերը և պահպանելով միայն առաջին հարցը (արդյոք գյուղատնտեսական գործունեություններ ծավալվում են թե ոչ): Սա այն հիմնական գիտելիքն է, որն անհրաժեշտ է ԳՀՀ համար և կարող է նաև արագացնել ԲՄ –ի մշակումը, սակայն այս մոտեցումը դժվարին է դարձնում նախապես որոշելու ԳՀՀ շեմը:

2.2.5 Փորձնական Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում

ՀՀ ԱՎԾ տեղեկացրեց, որ ըստ պլանի անհրաժեշտ է գտնել ֆինանսավորում ԳՀՀ փորձնական իրականացման համար: Որոշակի հիմնական փորձ արդեն իսկ ձեռք է բերվել գյուղացիական տնտեսությունների ռեգիստր ստեղծելու փորձնական ուսումնասիրությունից 2007-2008 թվականներին՝ Շվեդիայի Վիճակագրության հետ համագործակցությունից: Առաջիկա աշխատանքը այս նախագծի շրջանակներում և ԲՄ –ի փորձը 2011 թվականին հնարավոր կդարձնեն շարունակել զարգացնելու ԳՀՀ նախագծումը: ԱՊ փորձագետներին տեղեկացվեց, որ փորձնական ԳՀՀ ամենայն հավանականությամբ չի կարող անցկացվել ավելի վաղ քան 2012 թվականի աշնան վերջին: ՀՀ ԱՎԾ –ում նշվեց, որ փորձնական ԳՀՀ դիտվում է որպես <<ցանկություն>>, և որպեսզի ստացվի ֆինանսավորում նրանք դիմել են FAO-ին:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

ԱՊ փորձագետները գտնում են, որ <<Գյուղատնտեսության համատարած հաշվառման>> ծրագրի բաղադրիչի հետագա աշխատանքների համար պայմանները շատ խոստումնալից են:

- ԳՀՀ օրենքը հաստատված է Խորհրդարանի կողմից: Այն պարունակում է բոլոր անհրաժեշտ բնորոշումները համատարած հաշվառման նպատակների, կազմակերպման, տվյալների հասանելիության և այլնի վերաբերյալ:
- Նախկին համագործակցությունը Շվեդիայի Վիճակագրության հետ ինչպես նաև ներկայիս համագործակցությունը ԱՄՆ Գյուղդեպարտամենտի (USDA) հետ ենթադրում են, որ առաջիկա աշխատանքը կարող է սկսվել արդեն իսկ գոյություն ունեցող հարցաթերթիկների նախագծերով, հրահանգներով և այլն:
- 2011 թվականի ԲՄ –ը կտրամադրի հիմնական տեղեկատվություն գյուղատնտեսության վերաբերյալ, որը հնարավորություն կտա գտնել գյուղացիական տնտեսությունները և որոշել ԳՀՀ շեմը: 2011 թվականի ԲՄ –ի փորձը կապված կազմակերպչական հարցերի և հետազոտության տարբեր այլ քայլերի վերաբերյալ կարող են ևս օգտակար լինել ԳՀՀ պլանավորման համար:

2011 թվականի ԲՄ –ի ֆինանսավորումը այսօր ապահովված չէ: Սա նշանակում է, որ հնարավոր ռիսկ է հանդիսանում այն, որ 2011 թվականի ԲՄ –ը կարող է հետաձգվել: Այս իրավիճակում լավագույն լուծումը այն է, որ ԳՀՀ նույնպես հետաձգվի, որպեսզի ԲՄ տեղեկատվությունը ամբողջությամբ օգտագործվի:
Եթե սա ընդունելի չէ, ապա անհրաժեշտ կլինի նախապատրաստել այլընտրանքային շրջանակի օգտագործումը ԳՀՀ համար: Խորհրդատուները առաջարկում են, եթե նման իրավիճակ ստեղծվի, ապա հնարավոր է հետագայում վերանայել համայնքային անձնագրերի օգտագործումը:

Հաջորդ գործունեությունը Դ2 առաքելության այցելությունն է ՀՀ ԱՎԾ, որը նախատեսվում է 2011 թվականի Հունիսին: Բովանդակությունը կլինի ԳՀՀ բոլոր քայլերի վերանայումը՝ ելնելով հիմնականում այն փաստաթղթերի վրա, որոնք տրամարվել են ՀՀ ԱՎԾ ի և ԱՄՆ Գյուղդեպարտամենտի (USDA) համագործակցության արդյունքից (տես հավելված Դ1.7 ա գ): Այս վերանայումը կներառի համեմատություններ համապատասխան ԵՄ կանոնակարգի հետ և քննարկումներ տարբեր հասկացությունների վերաբերյալ,

հատկապես գյուղատնտեսական միավորի սահմանման վերաբերյալ և թե ինչպես պետք է վարվել ԳՀՀ հնարավոր շեմերի հետ:

Նախատեսվող գործողությունների սխեման, Դ1-Դ6 կարող եք գտնել հավելված Դ1.12 –ում: Գործունեություն Դ 4 –ի համար ԱՊ փորձագետները առաջարկում են, որ առաքելությունը ներառի նաև սեմինար տարածքային գրասենյակների աշխատակիցների համար կամ հատուկ սեմինար ավելացվի այդ ծրագրին: Մեկ այլ տարբերակ է կազմակերպել ընդհանուր սեմինար տարածքային աշխատակիցների համար՝ ընդգրկելով ծրագրի բոլոր բաղադրիչները տվյալների հավաքագրման վերաբերյալ: Նպատակն է ամրապնդել համագործակցությունը տարածքային և կազմակերպության կենտրոնական մակարդակների միջև և տարածքային աշխատակիցներին առավել շատ ներգրավել առաջադրանքների մեջ:

4. Հաջորդ գործունեությունից (Դ 2) առաջ իրականացվող քայլեր

Այս բաղադրիչի Դ 2 հաջորդ առաքելությունը պետք է զբաղվի Գյուղատնտեսության Համատարած հաշվառման բոլոր քայլերով:

Գյուղատնտեսության համատարած հաշվառման օրենքը համառոտ ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջացնում՝ պարզելու հիմնականում կազմակերպչական հարցերի իրավիճակը (նախապես որևէ նախապատրաստական աշխատանքների կարիք չկա):

Փորձնական Բնակչության Մարդահամարի (ԲՄ) արդյունքը. Փորձնական ուսումնասիրության զեկույցը օգտակար կլինի քննարկելու համար գյուղատնտեսական միավորների սահմանումը, շեմի որոշման և այլ հարցերի համար, ինչպես նաև պարզելու թե ինչ որքանով կարող է ԲՆ –ի կազմակերպումը, ընթացքը և այլն ընդօրինակվել ԳՀՀ համար: Անհրաժեշտ է փորձնական ԲՄ ի զեկույցի անգլերեն թարգմանությունը:

Հարցաթերթիկների նախագծերը և հարցաթերթիկների լրացման վերաբերյալ հրահանգները. Հարցաթերթիկների նախագծերը արդեն իսկ գոյություն ունեն: Եթե առկա են նաև հրահանգների նախագծերը, ապա անհրաժեշտ է դրանց անգելերեն թարգմանությունը:

Ղեկավարների դերը, հարցազրույց անցկացնողների, վերապատրաստողների, դաշտային աշխատանքների, տվյալների մուտքագրման, տվյալների ստուգման և այլն, բոլոր այս հարցերը կքննարկվեն: Այս հարցերի վերաբերյալ մեկ կամ ավելի փաստաթուղթ հավանաբար արդեն գոյություն կունենա ԲՄ –ի համար, ցանկալի կլինի դա ունենալ նաև անգլերեն լեզվով:

ԲՄ բյուջեն. Գոյություն ունեն արդյոք որևէ հաշվարկներ, եթե այո, ապա ցանկալի է դա ունենալ նաև անգլերեն լեզվով:

Հավելված 1 Տեխնիկական Առաջադրանք

Բաղադրիչ Ա Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ ՀՆԱ –ի Ամբողջականության բարելավում
Բաղադրիչ Դ Գյուղատնտեսական Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ ՏՏ Հանրություն

Գործունեություն Դ 1 Ընթացիկ իրավիճակի գնահատում և հնարավոր Իրավիճակների նախագծում

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակները հետևյալն են՝

- Գնահատել Գյուղատնտեսական Համատարած Հաշվառման պլանավորման առկա իրավիճակը;
- Անցկացնել սեմինար արտաքին շահառուների և դոնորների հետ՝ հնարավոր արտաքին սահմանափակումները և խոչընդոտները բացահայտելու համար, ինչպես նաև հաշվի առնելու մինչ այժմ ձեռք բերված առաջընթացը;
- Հստակեցնել որոնք են Եվրամիության չափանիշները գյուղատնտեսական վիճակագրության մեջ (գյուղատնտեսության համատարած հաշվառում), և ինչ կարող են դրանք ենթադրել ՀՀ ԱՎԾ Գյուղատնետեսության Համատարած Հաշվառման համար :

2. Ակնկալվող արդյունքը և գործողությունները

Գործողությունների ակնկալվող արդյունքները հետևյալն են՝

- Գյուղատնտեսության Համատարած Հաշվառման համար նախանշված ընդհանուր ծրագիրը,
- նախընտրելի լուծում
- հնարավոր այլընտրանքային լուծումներ;
- Անհրաժեշտ աշխատանքների հստակ և համաձայնեցված նախագծում, և ՀՀ ԱՎԾ –ի կողմից կատարված հետազոտություններ և որոշումներ և դրանց հնարավոր համագործակիցները, մինչ հաջորդ գործունեության իրականացումը;
- Աշխատանքային ծրագրի կազմում հաջորդ գործունեության համար (Դ2)
- Հաջորդ գործունեության նախընտրելի ժամանակացույցի որոշում (Դ2)

3. Նախագծի Մասնակիցները

Գագիկ Անանյան Պետական Վիճակագրության Խորհրդի Անդամ (Շահառու Երկրի (ՇԵ) Բաղադրիչի Ղեկավար)
Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության Վիճակագրության Բաժնի Ղեկավար
Լաուրա Գրիգորյան, Գյուղատնտեսության Վիճակագրության Բաժնի Գլխավոր Մասնագետ
Ռուզաննա Վարդանյան, Գյուղատնտեսության Վիճակագրության Բաժնի Գլխավոր Մասնագետ
Վարդան Արևշատյան, Գյուղատնտեսության Վիճակագրության Բաժնի Առաջատար Մասնագետ

Ռոլֆ Սելանդեր, Շվեդիայի Վիճագրական Ծառայության Գլխավոր Խորհրդատու, (Անդամ Պետության (ԱՊ) Բաժնի Ղեկավար)
Կրիստիան Հյուլսեգեր, Դանիայի Վիճակագրական Ծառայության Գյուղատնտեսության Վիճակագրության Բաղադրիչի Ղեկավար

Արտաքին Շահառուներ որոնք մասնակցել են գործունեությանը
ա. ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն
բ. Արտաքին դոնորներ – (ԱՄՆ Գյուղատնտեսության Պետդեպարտամենտ, Համաշխարհային Բանկ, այլ շահառուներ)
գ. FAO

Հավելված 2 Անդամ Պետության (ԱՊ) Փորձագետների հանդիպման ծրագիր

7 Մարտի (Երկուշաբթի) – 11 Մարտի (Ուրբաթ)

Ժամ	**Վայր**	**Միջոցառում**	**Նպատակը/Միջոցառման մանրամասները**
Երկուշաբթի առավոտյան	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում Թվինինգի Մշտական Խորհրդատուի հետ (ԹՄԽ)	Շաբաթվա Ծրագրի Քննարկում
Երկուշաբթի կեսօրին	Կոնգրես Հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ –ի հետ	Տեղեկացնել Անդամ Պետության (ԱՊ) փորձագետներին Գյուղատնտեսական Համատարած հաշվառման ներկա իրավիճակի վերաբերյալ, օր. կապը Մարդահամարի հետ, իրական ժամկետները
Երեքշաբթի ամբողջ օրը	Կոնգրես Հյուրանոց	Սեմինարի պլանավորում	Շնորհանդեսների և այլ նյութերի պատրաստում սեմինարի համար
Չորեքշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում Շահառու Երկրի Բաղադրիչի ղեկավարի և փորձագետի հետ	Ծրագրի կառուցվածքը և գործունեության նպատակը: Համաձայնություն սեմինարի վերջնական օրակարգի վերաբերյալ: Հնարավոր ծրագրի մշակում:
Չորեքշաբթի կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Սեմինարի Նախագծում	Հնարավոր հատուկ հանդիպումներ Շահառու Երկրի (ՇԵ) Փորձագետների հետ: Սեմինարի նյութերի ամփոփում:
Հինգշաբթի առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Սեմինար	Գյուղատնտեսական Համատարած Հաշվառման լայն հեռանկարների քննարկում: ԵՄ Կանոնակարգի ներկայացում և Գյուղատնտեսության համատարած հաշվառման ԵՄ փորձառության ներկայացում:
Հինգշաբթի կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետների հետ	Գյուղատնտեսական Համատարած Հաշվառման ծրագրի քննարկում և ՀՀ ԱՎԾ –ի համար կիրառելի աշխատանքային ծրագրեր: Հանդիպում ՇԵ Մարդահամարի փորձագետների հետ
Ուրբաթ առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հաշվետվության պատրաստում	Հնարավոր հատուկ հանդիպումներ Շահառու Երկրի (ՇԵ) Փորձագետների հետ: Մարդահամարի և Ժողովրդագրության բաժնի և Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի հետ:
Ուրբաթ կեսօրին	Աշտարակ	Այցելություն տարածքային վիճակագրական գրասենյակ	Տարածքային վիճակագրական գրասենյակների հարմարությունների զննում
Ուրբաթ կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ Նախագծի ղեկավարի հետ	Գործունեության (առաքելության) արդյունքների ներկայացում և հաջորդ քայլերը գործունեության (առաքելության) համար, ինչպես նաև դրանց միջև աշխատանքային ծրագիրը

Հավելված 3
Անձինք, որոնց հետ հանդիպումներ են կայացել

Պրն. Գագիկ Անանյան ՀՀ Վիճակագրության Պետական Խորհրդի անդամ (Շահառու Երկրի (ՇԵ) Բաղադրիչի ղեկավար)
Պրն. Արսեն Ավագյան, Գյուղատնտեսության Վիճակագրության բաժնի պետ
Դիանա Մարտիրոսովա, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ
Կարինե Կույումջյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Սեմինարի մասնակիցներ՝

EC/FAO Պարենային Անվտանգության Տեղեկատվության Համակարգ
ՀՀ ԱՎԾ Վիճակագրական պետական խորհրդի անդամ
ՀՀ ԱՎԾ Գյուղատնտեսության Վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Պարենային անվտանգության վիճակագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների հետազոտության բաժին
ՀՀ ԱՎԾ Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
ՀՀ ԱՎԾ Միջազգային համագործակցության բաժին
ՀՀ ԱՎԾ SS Զարգացման բաժին
ԱՄՆ Գյուղդեպարտամենտ
ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն